

զամ առաւօտեան ու իրիկուան վեցին ,
ու կէս օրը՝ ձարտարագործ արուեստով
մը՝ հրեշտակ պէտո՞ն զանգակին ձայնը
կը լսուի : Ան ատենը Շատուածածին
իր խցիկէն դուրս սրահը կ'ելլէ ու ա-
ղօթարան մը կ'երթայ աղօթք ընելու
համար . ան միջոցին աշտարակներուն
մէկէն հրեշտակ մը վար կ'իջնայ , թե ե-
րը կը շարժէ ու կ'երթայ սուրբ Շատուա-
ծածնայ մօտ կը կենայ , կը ծրուի առջևը
ու կարծես որ իրեն այն հրաշալի ողջու-
նատրութիւնը կ'աւետաւորէ : Առը Շա-
տուածածին կը խուզի , կը դողայ ,
ու յայտնի կ'երենայ իրեն երկիւղալից
զգացմունքը : Այ գործողութիւնը կ'ըւ-
լայ հրեշտակի առջի իրեք զարնուած-
քին . ու ետքը հրեշտակը աշտարակը
կ'երթայ , ու նորէն երկու անգամ ալ-
նոյն շարժմունքները և նոյն ողջունա-
տրութիւնը կը կատարուի :

Այ հրաշալի ձեռակերտին բանուած-
քը ոչինչ բնդհատ զարմանալի է հնա-
րագործութենէն , ու բոլորն ալ նոյն
գեղացիին ձեռագործն է : Ինիւներէն
ոմանք փայտէ են , ոմանք ալ պղնման :

Խեղձ գեղացին ցորեկը իր արտը
կ'աշխատէր , ու գիշերը կանթեղի մը
տիսուր լուսով իր ցօրեննոցին մէկ ան-
կիւնը քաշուած մեծ համբերութեամբ
իր ժամացոյցը կը շինէր : Հազար դը-
ժուարութիւն դէմն ելած ամենուն ալ
յաղթեր է իր երկայնմատութեամբը .
դժուարութիւնները ոչ իր համբերու-
թիւնը և ոչ իր արիութիւնը յոդնեցու-
ցին :

Այսպիսի գեղացին այն ընտիր մարդ-
կանց կարդը կը սեպուի որ զիտութիւն-
ները ու արուեստները կը դուշակեն ա-
ռանց սորված ըլլալու : Օ արմանալին
աս է որ Վիւսոն չէ թէ միայն ամե-
նայն բան ինք շինած է , հապա նաև
անոնք շինելու համար հարկաւոր գոր-
ծիքներն ալ իր ձեռագործն են . անանկ
որ միանգամայն ատաղծագործ է , ձա-
խարակագործ ու ժամագործ . և այն-
պէս կատարեալ է իր ձեռագործը որ

ինչ և իցէ մեծածախ դահլիճներու
ազնուագոյն զարդը կրնայ ըլլալ :

Իմէն օր գնացող գնացողի են այս-
պիսի հրաշալի արուեստաւոր ու ձեռա-
գործ տեսնալու :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դ' ԱՓու ԱՅԻՔ Հոգեփոխութեան ա-
զանդն ընդունելով՝ ըլլալուանիեաց մի
չեն ուտեր և մասնաւոր խնամք մը ու-
նին շանց վրայ , անոր համար բոլոր քա-
ղաքներն ու գեղերը չներովլեցուն են :
Եթ պատմեն թէ իրենց մէկ ինքնակալը
շնիկ համաստեղութեան տակ ծնած
ըլլալով մասնաւոր խնամք ունեցաւ շանց
վրայ , ու հրաման հանեց որ իւրաքան-
չւուր թաղ այսչափ թուովլշուն պահէ .
անոր համար ամէն փողոց մանր տնակ-
ներ շինեցին անսոնց , և ովլ որ շուն մը
սպամներ՝ մահ էր պատիժը : Խակ երբ-
որ շուն մը կը սատկէր՝ պարտրիան էին
դին շալկել ինչուան լեռան մը ծայրը
տանիլ ու հոն թաղել : (Ճ ը մը մարդուն
մէկը շան մը սատակը տանելու ատեն
յոգնած՝ սկսաւ թագաւորին ծննդեան
օրը նզովիլ և իրեն անխելք հրամանը
վար զարնել . հոն իր ընկերը կեղծ
բարկութեամբ մը ասոր վրայ կը փրթի
ու կ'ըսէ , մանաւանդ թէ պէտք է աս-
տուածներուն չնորհակալ ըլլալ որ մէր
ինքնակալին ծնունդը շնիկ համաստե-
ղութեան տակ հանդիպցուցին . հա-
պա թէ որ ձի՝ համաստեղութեան
տակ հանդիպցընէին՝ այսօր ինչ պիտի
ընէիր :

1 Ճափոնացւոց համաստեղութեան մէկն ու
ձին է , վասն զի այսպէս կը համբեն . Մուկն , Ցուլ-
վագր , Կապաստակ , Վիշապ , Օձ , Ձի , Խոց ,
Կապիկ , Աքաղաղ , Ծուն , Խոզ :

